ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 մարտի 2023 թվականի թիվ 10-Ա

ք. Երևան

«ԹԻ ՎԻ ԿՈՆՏԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ԹԻ ՎԻ ԿՈՆՏԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության 2023 թվականի մարտի 7-ի տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Հաստատել «ԹԻ ՎԻ ԿՈՆՏԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության տեսալսողական ծրագրի վերաբերյալ ծանուցումը՝ համաձայն Հավելված 1-ի :

2. Մերժել «ԹԻ ՎԻ ԿՈՆՏԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության ծանուցումը Հավելված 2-ում նշված տեսալսողական ծրագրի մասով՝ թերի լինելու հիմքով՝ 2022 թվականի հուլիսի 1-ին կնքված № 5/2022 պայմանագրի կողմ հանդիսացող «ԻՆՏԵՐՆԵՇՆԼ ԴԻՍՏՐԻԲՈՒՇՆ ՑԵՆՏՐ» ՍՊ ընկերությունը չի հանդիսանում դիստրիբյուտոր և Հայաստանի Հանրապետության տարածքում «Известия» տեսալսողական ծրագրի տարածման իրավատեր չէ, չի ներկայացվել պայմանագրի առարկա համարվող ալիքների ցանկը ներառող հավելված 1-ը, որը պայմանագրի անբաժանելի մասն է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԹԻ ՎԻ ԿՈՆՏԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2023թ. մարտի 27
ք. Երևան

Հավելված 1
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2023 թվականի մարտի 27-ի թիվ 10-Ա որոշման

Տեսալսողական ծրագրի անվանումը	**Ժամկետը**
«Baby Time»	պայմանագրի գործողության ժամկետով

Հավելված 2
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2023 թվականի մարտի 27-ի թիվ 10-Ա որոշման

Տեսալսողական ծրագրի անվանումը
«Известия»